



ՔԱՂԱՔ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ (UCLA)

ՇՏԱՊ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐ

ԱԶԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



Ծրագրի մասին.

Լոս Անջելեսի Միացյալ Նահանգների Բնակարանների շտապ վարձակալների աջակցման ծրագիրը՝ Լոս Անջելեսի բնակաանաշինության (UCLA) հետ համատեղ կապահովեն մինչև վեց ամիս վարձավճարի պարտքի մարումը ցածր եկամուտ ունեցող տան վարձակալներին, ովքեր անօթևան մնալու վտանգի տակ են՝ COVID-19-ի կամ այլ ֆինանսական դժվարությունների հետևանքով չվճարված վարձավճարների պատճառով:

Իրավասություն ստանալու համար ընտանիքը պետք է պարտավորվի վճարել բնակելի տան վարձավճարը և բավարարի հետևյալ պահանջները.

1. Լինել Լոս Անջելես քաղաքի ռեզիդենտ՝ անկախ ներգաղթի կարգավիճակից: Որպեսզի ստուգեք, արդյոք Դուք ապրումեք Լոս Անջելես քաղաքում, անցեք neighborhoodla.lacity.org հղումով:
2. Ընտանիքի մեկ կամ մի քանի անհատներ 2020 թվականի մարտից մինչ օրս կորցրել են աշխատանքը, կրճատվել են ընտանիքի եկամուտները, կրել են զգալի ծախսեր կամ ունեցել են այլ ֆինանսական խնդիրներ:
3. 2020 թվականի ապրիլից մինչ օրս ունեն չվճարված վարձավճարներ իրենց ներկայիս տանտիրոջ հաշվին:
4. Ընտանիքի ընթացիկ եկամուտը կազմում է տարածքային միջին եկամտի (AMI) 80%-ը կամ դրանից ցածր:

2023 Բնակարանաշինության և քաղաքաշինության (HUD) եկամուտների սահմանաչափերը

Եկամուտի սահմանաչափի կատեգորիա	1 Անդամ	2 Անդամ	3 Անդամ	4 Անդամ	5 Անդամ	6 Անդամ	7 Անդամ	8 Անդամ
Ցածր եկամտի 80% միջին	70,650 ԱՄՆ դոլար	80,750 ԱՄՆ դոլար	90,850 ԱՄՆ դոլար	100,900 ԱՄՆ դոլար	109,000 ԱՄՆ դոլար	117,050 ԱՄՆ դոլար	125,150 ԱՄՆ դոլար	133,200 ԱՄՆ դոլար

Դիմումների ժամկետներն են. բացվում է 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ժ. 8:00-ին, փակվում է՝ 2023 թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 18:00-ին

Ինչպե՞ս կարող եմ դիմել:

Դիմեք առցանց @ housing.lacity.org 24/7 մինչև ծրագրի փակվելը

Հեռախոսով՝ 888.379.3150 Եկուշաբթի-Ուրբաթ ժ. 8:00-18:00

Անհատական այցելեք housing.lacity.org կայք՝ դիմումների ընդունման գրասենյակների համար

Ծրագրերի մասին հարցերի դեպքում, այցելեք housing.lacity.org կայք

Սկսած 2023 թվականի հոկտեմբերի 23-ի ժամը 08:00-ից, 12 կամ ավելի քիչ բնակարաններ ունեցող Մանր Սեփականատեր Մատակարարները կարող են դիմումներ ներկայացնել: